ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ք.Իջևան

«17» 01 2023թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) ի դեմս տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի որը գործում է կանոնադրության հիման վրա, և ««ԷԼԹԻ ՔՈԴԻՆԳ» ՍՊԸ (այսուհետ՝ ՍՊԸ), ի դեմս ՍՊԸ-ի տնօրեն Լիանա Ծատուրյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Հուշագրի առարկան Կողմերի համագործակցության նպատակի, գործընկերության հիմնական ուղղությունների սահմանումն է:

1.2. Կողմերը, համապատասխանաբար կնքելով սույն համագործակցության հուշագիրը, ամրագրում են սահմանված նպատակի հասնելուն ուղղված իրենց պատրաստակամությունը: Սույն հուշագիրը միջոցների հատկացման պարտավորագիր չէ: Այն ցանկացած Կողմի համար օրենքով պարտադրվող պարտավորություն չի համարվում, կամ իրավունքներ չի տրամադրում որևէ այլ Կողմի համար:

2. ՀՈՒՇԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ և ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Հուշագրի նպատակը Կողմերի միջև գործընկերային հարաբերությունների հաստատումն է, համագործակցության ծրագրերի իրականացումը՝ Հուշագրի 2.2. կետում նախատեսված ուղղություններով:

2.2. Կողմերի համագործակցության հիմնական ուղղություններն են.

2.2.1. ուսանողների մասնակցությամբ կլոր սեղանների, թեմատիկ բանավեճերի կազմակերպում,

2.2.2. համատեղ ծրագրերի իրականացում,

2.2.3. ուսանողների պրակտիկաների կազմակերպում և անցկացում,

2.2.4. համատեղ ժողովների կազմակերպում,

2.2.5. ԵՊՀ ԻՄ և ՍՊԸ-ի գործունեության լուսաբանման նպաստում,

2.2.6. ծրագրերի իրականացմանն ուղղված երիտասարդների հավաքագրմանը, տեխնիկական միջոցների տրամադրմանը, տեղեկատվության տարածման աջակցում,

2.2.7. ԵՊՀ ԻՄ ուսանողների ներառումը ՍՊԸ-ի կադրային բազայում,

2.2.8. սույն Հուշագրի շրջանակներում այլ գործողությունների իրականացում:

3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

3.1. Կողմերը պարտավոր են առաջնորդվել համագործակցության հետևյալ հիմնական սկզբունքներով.

- փոխադարձ վստահություն,
- պատասխանատվություն,
- պարտաճանաչություն,
- որակի վերահսկում

- փոխըմբռնում և փոխզիջում,
- թափանցիկություն,
- համագործակցություն:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է անժամկետ:

4.2. Սույն Հուշագրի ցանկացած փոփոխություն կատարվում է գրավոր և դառնում նրա անբաժանելի մասը:

4.3. Հուշագիրը կարող է դադարեցվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ, մյուս Կողմին առնվազն 30 օր առաջ գրավոր տեղեկացնելու պայմանով:

4.4. Սույն Հուշագրի վերաբերյալ Կողմերի միջև ծագած անհամաձայնություններն ու վեճերը լուծվում են Կողմերի բանակցությունների միջոցով:

4.5. Սույն Հուշագիրը կնքվում է երկու բնօրինակից, հայերեն լեզվով, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղ Հասցե՝ Տավուշի մարզ, ք. Իջևան ՈՒսանողական 3 Տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Մակարյան Կ.Տ.	«ԷԼԹԻ ՔՈՂԻՆԳ» ՍՊԸ Հասցե՝ Վալանսի փ. /Տ/ 16 Իջևան 4001, Տավուշ, ՀՀ Տնօրեն՝ Լ. Ծատուրյան Կ.Տ.